

Շուարեցաւ Թեոդորոս, ո՛ր կողմ պետք էր դիմէի թշնամի՞ն պետք էր մտածել թէ ընտանին, որուն վրայ կարելի չէր վստահիր Բայց անխռով կերպարանք առնելով շարունակեց իւր ճանապարհը եւ մտաւ Արտագու դաշտը՝ օգնելու Վահանայ: Սակայն մատնութիւնը ամէն բան խանգարէր էր, Սահուն Անձեւացեաց նախարարը ոչ միայն առաջնորդէր էր թշնամեաց, այլեւ պատերազմի ժամանակ հացո՞ց իր եղբարցը վրայ դարձնելով զէնքը սկսեր էր ահագին կոտորած հասցնել, թեպէտ իր արժանաւոր պատիժը գտեր էր Տիրան քաշ իշխանի մը սուրին բերանն ինկնելով, որ թշնամեաց բազմութենէն պաշարեալ զոհ եղեր էր վերջապէս քաջութեան: Վահան քանի մը քաջերով թշնամեաց բազմութիւնը ճեղքելով հազիւ ազատած կոտորածէն՝ Թեոդորոսի բանակը եկաւ:— Այս փախստականք զօրութեամբ չէին, վասնզի ահաբեկեալ՝ երկիւղ կ'ազդէին զօրաց իրենց թշուառ պատերազմին պատմութեամբ. բայց Թեոդորոս շարունակեց իւր ճամփան՝ հետամուտ լինելով թշնամուոյն, որուն հասնիլ անկարելի եղաւ, վասնզի՝ ինչպէս ժամանակակից պատմիչ մը կըսէ. «Օդաթել արագութեամբ իբրեւ օձք թունաւորք արձակեալք եառաջին թշնամիք եւ զկնի իւրեանց թողին զօրս Յայոց»: Եւ այսպէս կը յարձակէին Դուին քաղաքին վրայ Կոզովտէ անցնելով: Երեք իշխանք միայն, որ մնացեր էին ցրուեալ զօրքը ժողուեղու՝ Թեոդորոս Վահեւունի, Խաչեան Առաւելեան եւ Շապուհ Ամատունի՝ որ կործանեցին Մեծամորի կամուրջը եւ զնացին լուր տալու քաղքին:

Անզէն եւ պատերազմի անվարժ ժողովուրդն ամէն կողմէն ապաստանեցաւ բերդը, եւ թշնամին Մոկաց իշխանին առաջնորդութեամբ անցաւ Երասխը եւ եկաւ բանակեցաւ Խոսրովու անտառին եզերքը: Հինգերորդ օրը արաբացիք մեծ կրակ վառեցին պարսպին տակ եւ մուխով ու նետածգութեամբ հեռացուցին պահապանները եւ սանդուխներով ելան տիրեցին պարսպին, բացին դռները եւ ներս խուժեցին: Տասներկու հազար մարդ ջարդեցին, երսուկիկնգ հազար տղայք ու կանայք դերի վարեցին, եւ քաղաքն աւարեցին ու կողոպտեցին: Եւ նոյն Կոզովտի ճանապարհը բռնեցին ետ դառնալու համար:

Թեոդորոս Նախջեան իմացաւ թշնամուոյն արարքը եւ բազմութիւնը: Թէեւ զօրքը բաղդատմամբ շատ քիչ էին, չի կարենալով համբերէք անցաւ սպասեց իրենց ճամփան Կոզովտ՝ յարձակեցաւ իրենց վրայ եւ արիւնահեղ պատերազմէ մը վերջ շատ զօրք կորսնցնելով պարտաւորեցաւ ետ քաշուելու, եւ աւազակաց ազգն ազատ համարձակ զնաց Ասորեստան ողբ, արիւն եւ աւերակ թողլով ետին: